Արձանագրություն N 2
ՋԿ-ԳՀԾՁԲ-23/2-Տ ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 26 ապրիլի 2023թ.

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Կ. Սարգսյանը (ԳԱՊ)
Հանձնաժողովի անդամներ Ն. Ավետյանը, Տ. Վարդանյանը, Տ. Բոյախչյանը և Ս. Աբազյանը
Քարտուղար՝ Ս. Գալստյան:

Հայտերի բացման վերաբերյալ

Ջրային կոմիտեի կարիքների համար ոռոգման համակարգերի հիմնանորոգման աշխատանքների (ՀՀ Արմավիրի մարզի Մրգաշատ համայնքի բաժանարար N2 («Դամբուլներ» կոչվող հողատարածքների ոռոգման ներտնտեսային 1000մ երկարությամբ) ջրանցքի վերակառուցման, ՀՀ Արարատի մարզի Քաղցրաշեն - 1 պոմպակայանի 2-րդ հերթի մղման ավազան ջուր տեղափոխող D=500մմ տրամագծով, L=190գծ.մ երկարությամբ մետաղական խողովակաշարի տեղադրման և «Արմաշ» ջրհան կայանի ճնշումային խողովակաշարի Սուրենավան համայնքում IV գոտու հեռացնող ջրատարի վերականգնման և «Արմաշ» ջրհան կայանի ճնշումային խողովակաշարի Սուրենավան համայնքում III գոտու ձախ հեռացնող ջրանցքի հիմնանորոգման աշխատանքների) որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման ՋԿ-ԳՀԾՁԲ-23/2-Տ ծածկագրով ընթացակարգի հայտերը էլեկտրոնային ձևով www.armeps.am կայքի միջոցով բացվել են 2023 թվականի ապրիլի 10-ին, ժամը 16:00-ին:

ՋԿ-ԳՀԾՁԲ-23/2-Տ ծածկագրով ընթացակարգին մասնակցության հայտ է (են) ներկայացրել հետևյալ մասնակից (ները)

Մասնակցի անվանումը	հասցե, հեռախոսահամար	Էլեկտրոնային հասցե
«Ռիջիդ» ՍՊԸ	ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ. Գեղամավան 2-րդ փ. 3-րդ նրբ. 25տ. հեռ. 093 355787	rigidalgroup@gmail.com
«ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ	ք. Երևան, Կոմիտաս 54բ հեռ. 093 800009	ekspertizaproektov@mail.ru
«ԱՄԵՏԻՍ» ՍՊԸ	ք. Երևան, Շերամի փողոց 103/29 հեռ. 093 555211, 093 429881	ametisiic@gmail.com
«ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ	ՀՀ Արարատի մարզ, գ. Ուստան, Թեհլերյան 14 հեռ. 043 600090	gritig@inbox.ru

Մասնակցի (ների) գնային առաջարկը

ՀՀ դրամ

	Մասնակցի անվանումը	Արժեք	ԱԱՀ	Ընդհանուր գինը
Չափաբաժին 1 **Գնման գին – 459 430 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ)** Տեխնիկական հսկողության ծառայություններ - ՀՀ Արարատի մարզի Քաղցրաշեն-1 պոմպակայանի 2-րդ հերթի մղման ավազանից 1-ին հերթի մղման ավազան ջուր տեղափոխող D=500մմ տրամագծով, L=190գծ.մ երկարությամբ մետաղական խողովակաշարի տեղադրման աշխատանքների				
	«Ռիջիդ» ՍՊԸ	260 000	-	260 000
	«ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ	440 000	-	440 000
Չափաբաժին 2 **Գնման գին – 642 720 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ)** Տեխնիկական հսկողության ծառայություններ - ՀՀ Արմավիրի մարզի Մրգաշատ համայնքի բաժանարար N2 («Դամբուլներ» կոչվող հողատարածքների ոռոգման ներտնտեսային 1000մ երկարությամբ) ջրանցքի վերակառուցման աշխատանքների				
	«Ռիջիդ» ՍՊԸ	360 000	-	360 000
	«ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ	590 000	-	590 000
Չափաբաժին 3 **Գնման գին – 978 600 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ)** Տեխնիկական հսկողության ծառայություններ - «Արմաշ» ջրհան կայանի ճնշումային խողովակաշարի Սուրենավան համայնքում IV գոտու հեռացնող ջրատարի վերականգնման աշխատանքների				
	«Ռիջիդ» ՍՊԸ	420 000	-	420 000
	«ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ	570 000	114 000	684 000
	«ԱՄԵՏԻՍ» ՍՊԸ	635 000	-	635 000
	«ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ	920 000	-	920 000
Չափաբաժին 4 **Գնման գին – 2 156 500 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ)** Տեխնիկական հսկողության ծառայություններ - «Արմաշ» ջրհան կայանի ճնշումային խողովակաշարի Սուրենավան համայնքում III գոտու ձախ հեռացնող ջրանցքի հիմնանորոգման աշխատանքների				
	«Ռիջիդ» ՍՊԸ	860 000	-	860 000
	«ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ	1 250 000	250 000	1 500 000
	«ԱՄԵՏԻՍ» ՍՊԸ	1 509 000	-	1 509 000
	«ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ	1 600 000	-	1 600 000

Մասնակից(ներ)ի կողմից ներկայացված բացված յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայությունը և դրանց համապատասխանությունը հրավերի պահանջներին

ՋԿ-ԳՀԾՁԲ-23/2-Տ ծածկագրով ընթացակարգի մասնակից **«Ռիջիդ» ՍՊԸ-ի** հայտով ներկայացված Հավելված 1-ում (դիմում հայտարարություն) նշված չէ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում գրանցած՝ իր իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը, Հավելված 3-ով ներկայացված աշխատակազմում ներգրավված մասնագետ Արտաշես Շիրինյանի անձնագրի վավերականությունը ժամկետանց է, ներգրավված մասնագետների համաձայնագրերում նշված չեն համապատասխան չափաբաժինների համարները:

Մասնակից **«ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ-ի** հայտով ներկայացված Հավելված 3-ում նշված չեն ներգրավված մասնագետների կատարված աշխատանքները և ներկայացված չեն կից փաստաթղթերը (աշխատակազմում ներգրավված մասնագետների հաստատած գրավոր համաձայնությունները բնօրինակից արտատպված (սկանավորված)՝ իրականացվելիք աշխատանքներում վերջիններիս ներգրավվելու մասին, ինչպես նաև մասնագետների անձնագրերի և որակավորումը հավաստող փաստաթղթերի (դիպլոմ, վկայագիր, հավաստագիր, արտոնագիր և այլն) պատճենները:): Մասնագետների համաձայնագրերում անհրաժեշտ է նշել նաև տվյալ մասնագետը որ չափաբաժնի մասնակցության համար է ներգրավվել:

Մասնակից **«ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ-ի** հայտով ներկայացված Հավելված 3-ում նշված Գործունեության ոլորտը չի համապատասխանում ՋԿ-ԳՀԾՁԲ-23/2-Տ ծածկագրով հրավերով պահանջվող՝ «Հիդրոտեխնիկական ոլորտում մատուցված ծառայությունների» ոլորտին, նշված չեն նաև ներգրավված մասնագետների կատարած աշխատանքները: Ներգրավված մասնագետ Ալեքսան Ալեքսանյանի համաձայնագրում սխալ է նշված մասնագետի Անունը և Ազգանունը, մասնագետ Թաթուլ Մելքոնյանի անձնագրի վավերականությունը ժամկետանց է: Հայտով ներկայացված «Մասնակցի նմանատիպ փորձառություն» չափանիշի հիմնավորման համար ներկայացված պայմանագրի ոլորտը չի համապատասխանում հրավերով նմանատիպ պայմանագրի համար պահանջվող տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման ոլորտին:

Մասնակից **«ԱՄԵՏԻՍ» ՍՊԸ-ի** հայտով ներկայացված Հավելված 1-ում (դիմում հայտարարություն) նշված իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում գրանցած՝ իր իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը վավեր չէ, Ընկերությունը հայտ է ներկայացրել 3-րդ և 4-րդ չափաբաժինների համար, սակայն Հավելված 3-ում և կից փաստաթղթերով ներկայացված է մեկ ներգրավված մասնագետ, որը չի համապատասխանում ՋԿ-ԳՀԾՁԲ-23/2-Տ ծածկագրով հրավերի պահանջներին (եթե մասնակիցը հայտ է ներկայացնում 1-ից ավելի չափաբաժինների համար, պետք է յուրաքանչյուր չափաբաժնի համար հայտով ներկայացնի առնվազն 1 մասնագետ:): Մասնագետների համաձայնագրերում անհրաժեշտ է նշել նաև տվյալ մասնագետը որ չափաբաժնի մասնակցության համար է ներգրավվել: Հայտով ներկայացված չէ «Մասնակցի նմանատիպ փորձառություն» չափանիշի հիմնավորման համար պահանջվող նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) և պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի (համաձայնագրի) կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

Հանձնաժողովի որոշումը

ՋԿ-ԳՀԾՁԲ-23/2-Տ ծածկագրով ընթացակարգի մասնակիցների կողմից հայտով ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում գնահատող հանձնաժողովը որոշեց.

Համաձայն Հրավերի 8.9 և 8.10 կետերի՝ մեկ աշխատանքային օրով կասեցնել հանձնաժողովի նիստը՝ առաջարկելով մասնակիցներ **«Ռիջիդ» ՍՊԸ-ին, «ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ-ին, «ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ-ին** և **«ԱՄԵՏԻՍ» ՍՊԸ-ին** մինչև կասեցման ժամկետի ավարտը (27.04.2023թ. ներառյալ) շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստ հրավիրել ըստ անհրաժեշտության, որը տեղի կունենա Ջրային կոմիտեի վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Վարդանանց 13ա:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0
Գնահատող հանձնաժողովի՝

Նախագահ	_____	Կ. Սարգսյան
անդամներ	_____	Ն. Ավետյան
	_____	Տ. Բոյախչյան
	_____	Տ. Վարդանյան
	_____	Ս. Աբազյան
Քարտուղար	_____	Ս. Գալստյան